Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
մայիսի 22-ի N 613 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն

1.1. Ծրագրի նկարագիր. դասընթացը նպատակ ունի բուժաշխատողներին սովորեցնելու արտակարգ իրավիճակներում տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերել, արագ արձագանքել անհետաձգելի իրավիճակների ժամանակ և կյանքի համար վտանգավոր իրավիճակներում տուժածներին ցուցաբերել առաջին բուժօգնություն՝ մինչև մասնագիտական թիմերի ժամանումը, կազմակերպել թիմային աշխատանք:

1.2. Ուսուցանվող գիտելիքների շրջանակ.

1) Առաջին բուժօգնության հիմունքներ՝ ներածական մաս, արտակարգ իրավիճակների պայմաններում առաջին բուժօգնության կազմակերպում, հիմնական սկզբունքների ներկայացում.

2) Սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ)՝ մեծահասակների, 0-1 տարեկան և 1 տարեկանից բարձր երեխաների ՍԹՎ-ի հիմնական բաղադրիչները և տարբերությունները, սրտի անուղղակի մերսում, ցուցում, կատարման տեխնիկա, ՍԹՎ-ի ավարտը, արդյունավետության և անարդյունավետության գնահատում, արտահիվանդանոցային ՍԹՎ-ի հիմնական բաղադրիչները և տարբերությունները.

3) Ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների օգտագործում՝ ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների կարևորությունը, ճիշտ և վաղ կիրառման կարևորությունը և հմտությունները.

4) Բազմափրկարար սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ) իրականացնելիս թիմային աշխատանքի կազմակերպում և արդյունավետ թիմի անդամի դրսևորում.

5) Թոքերի արհեստական արդյունավետ օդափոխություն սարքի միջոցով՝ ցուցումը, կատարման տեխնիկան, ավարտը.

6) Շնչառություն, շնչուղիների անցանելիություն, օտար մարմնով շնչուղիների խցանման վերացում տարբեր տարիքային խմբերում՝ շնչուղիների անցանելիություն, շնչառություն և արյան շրջանառություն (ABC), օտար մարմնի հեռացում շնչուղիներից, արհեստական շնչառություն, մանեկենի վրա արհեստական շնչառության տեխնիկայի ցուցադրում (բերան-բերան, բերան-քիթ, Ամբու պարկ).

7) Առաջին բուժօգնություն վնասվածքի հետ կապված անհետաձգելի վիճակների դեպքում՝ վերքերի, վնասվածքների, արյունահոսությունների, այրվածքների, կոտրվածքների դեպքում, ինչպես նաև շոկային իրավիճակների վաղ հայտնաբերում և առաջին բուժօգնություն:

Տևողությունը՝ 12 ժամ (12 ՇՄԶ կրեդիտ):

Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ:

2. Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոններ

2.1. Ծրագրի նկարագիր. «Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոններ» դասընթացը նպատակ ունի բուժաշխատողներին սովորեցնելու մասնագիտական գործունեության հիմքում վարքաբանությունը: Դասընթացն իր մեջ ներառում է բուժաշխատողի վարքագծի հիմնական ասպեկտները, որոնք ապահովում են արդյունավետ և հարգալից փոխհարաբերություններ պացիենտների, գործընկերների և ընդհանրապես հասարակության հետ:

2.2. Ուսուցանվող գիտելիքների շրջանակ.

1) **Բուժաշխատողի էթիկական պարտականությունները**. պացիենտների նկատմամբ համակրանք, հարգանք, գաղտնիություն և տեղեկացված համաձայնություն.

2) **Բուժաշխատողների փոխհարաբերությունները.** գործընկերների, պացիենտների և նրանց ընտանիքների, երրորդ անձանց հետ, ինչպես նաև թիմային աշխատանքի նշանակությունը.

3) **Մասնագիտական պատասխանատվությունը.** բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմի ապահովում, ինչպես նաև բժշկական գիտելիքների շարունակական ձեռքբերում.

4) **Բժշկական գաղտնիք համարվող տվյալները և դրանց պահպանման կանոնները.** ինչպես պաշտպանել պացիենտների տվյալները և խուսափել էթիկական խախտումներից.

5) **Իրազեկված համաձայնություն.** բժշկական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ իրազեկված համաձայնության ստացման կարգը և առանձնահատկությունները.

6) **Բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների խախտումները քննող հանձնաժողով.** հանձնաժողովի գործունեությունը, վերջինիս կողմից կայացվող որոշումները և դրանց իրավական հետևանքները:

Տևողությունը՝ 10 ժամ (10 ՇՄԶ կրեդիտ):

Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ